

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Թևան Պողոսյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-303-19.07.2013-ՊԻ-010/0) վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը նպատակահարմար է համարում «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի 113-րդ հոդվածում լրացվող 4.1-ին մասի «ա» և «բ» կետերով առաջարկվող՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների ոլորտի մշտական հանձնաժողովի, բարեկամական խմբերի անդամների և օտարերկրյա պետություններում հավատարմագրված Հայաստանի Հանրապետության դեսպանների և միջազգային կազմակերպություններում Հայաս-

տանի Հանրապետության մշտական ներկայացուցիչների հետ հանդիպումը կազմակերպել
Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հետ համատեղ:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայաց-
ված օրենքի նախագիծն ընդունելի կհամարի իր կողմից ներկայացված առաջարկության
ընդունման դեպքում:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի
Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հա-
յաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ Շավարշ Քոչարյանը:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրվում է օրենքի նախագծի կարգավորման
ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**<<Ազգային ժողովի կանոնակարգ>> Հայաստանի Հանրապետության օրենքում
լրացում կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծի ընդունման դեպքում**

<<Ազգային ժողովի կանոնակարգ>> Հայաստանի Հանրապետության օրենքում
լրացում կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծի ընդունումն առողջապահության
բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

**ՀԱԿԱԿՈՒՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում
լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի
վերաբերյալ**

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում
լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ
Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի
«Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում
կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու
մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ
կոռուպցիոն գործոն չի պարունակում:

Եզրակացություն

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաօլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն**.

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն**:

ԱՁԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենք) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ազգային Ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Ազգային Ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում
լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը
(այսուհետ՝ Նախագիծ) ուղղված է ՀՀ ազգային ժողովի արտաքին հարաբերությունների
մշտական հանձնաժողովի անդամների, օտարերկրյա պետություններում և միջազգային
կազմակերպություններում հավատարմագրված դեսպանների և/կամ դիվանագիտական
ներկայացուցչությունների ղեկավարների և ՀՀ Ազգային Ժողովի բարեկամական խմբերի
անդամների ՀՀ արտաքին քաղաքականության ոլորտում միասնական պետական
քաղաքականության վարմանը:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային
շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային
դաշտի վրա ազդեցություն չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության
գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ
մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ազգային Ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Ազգային Ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում
լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի
(այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման
ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է
դարձել, որ Նախագիծը վերաբերում է *ՀՀ Ազգային Ժողովի արտաքին
հարաբերությունների մշտական հանձնաժողովի անդամների, օտարերկրյա
պետություններում և միջազգային կազմակերպություններում հավատարմագրված
դեսպանների և/կամ դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների և ՀՀ
Ազգային Ժողովի բարեկամական խմբերի անդամների համադրել հանդիպումների
կազմակերպմանը* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում
գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն *չի նախատեսվում*:

Եզրակացություն
«Ազգային Ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

«Ազգային Ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը՝ ընդունվելու կամ չընդունվելու դեպքում, ՀՀ պետական և համայնքների բյուջեների մուտքերի և ելքերի, ինչպես նաև բյուջետային բնագավառում քաղաքականության փոփոխմանը չի հանգեցնում:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-303-19.07.2013-ՊԻ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Ազգային Ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի փետրվարի 20-ի HO-308 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 113-րդ հոդվածը լրացնելի հետեյալ բովանդակությամբ 4.1 մասով.

«4.1 Ազգային Ժողովի արտաքին հարաբերությունների ոլորտի մշտական հանձնաժողովը.

ա) օտարերկրյա պետություններում եւ միջազգային կազմակերպություններում հավատարմագրված ՀՀ դեսպանների եւ/կամ/ դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների հետ մինչեւ նշանակման երկիր մեկնելը կազմակերպում է հանդիպում հանձնաժողովի անդամների հետ,

բ) իր գործունեության ոլորտներին վերաբերող հարցերով օտարերկրյա պետություններում եւ միջազգային կազմակերպություններում հավատարմագրված դեսպանների եւ/կամ/ դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների եւ ՀՀ Ազգային Ժողովի համապատասխան երկրի բարեկամական խմբի անդամների հետ կազմակերպում է համատեղ հանդիպումներ,

գ) ՀՀ Ազգային Ժողովի կողմից գործուղման մեկնող բարեկամական խմբերի անդամների հետ, մինչեւ գործուղման երկիր մեկնելը, կազմակերպում է հանդիպումներ՝ տվյալ երկրի հետ խորհրդարանական դիվանագիտության շրջանակներում Հայաստանի Հանրապետության վարվող քաղաքականության մանրամասների շուրջ քննարկում ծավալելու նպատակով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Առաջարկվող օրենքի նախագիծը ՀՀ Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի պատգամավորներին հնարավորություն կտա.

- պարբերաբար տեղեկանալ օտարերկրյա պետություններում եւ միջազգային կազմակերպություններում հավատարմագրված դեսպանների եւ/ կամ/դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների գործունեության վերաբերյալ,
- ծանոթանալ տվյալ երկրում Հայաստանի Հանրապետության արտաքին հարաբերություններին առնչվող ընթացիկ իրավիճակի վերաբերյալ, որը կնպաստի արտաքին հարաբերությունների ոլորտում երկրի անվտանգության հաստատման ուղղությամբ օպերատիվ եւ ճշգրիտ քայլեր ձեռնարկելուն, ինչպես երկրից դուրս, այնպես էլ՝ երկրի ներսում:

Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի անդամների, օտարերկրյա պետություններում եւ միջազգային կազմակերպություններում հավատարմագրված դեսպանների եւ/ կամ/դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների եւ ՀՀ Ազգային ժողովի բարեկամական խմբերի անդամների հետ համատեղ հանդիպումները կնպաստեն ՀՀ արտաքին քաղաքականության ոլորտում միասնական պետական քաղաքականության վարմանը:

ՀՀ Ազգային ժողովի բարեկամական խմբի անդամների, գործուղման մեկնելուց առաջ, արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի պատգամավորների հետ հանդիպումների շնորհիվ, տվյալ բարեկամական խմբի անդամները հնարավորություն կստանան ավելի մանրամասն տեղեկանալ տվյալ երկրի հետ խորհրդարանական դիվանագիտության շրջանակներում Հայաստանի Հանրապետության վարվող քաղաքականության հիմնական շեշտադրումներին, որն էլ իր հերթին կնպաստի տվյալ բարեկամական խմբի անդամների գործունեության արդյունավետության բարձրացմանը այն բարեկամական խմբում, որի անդամն են իրենք հանդիսանում: